ЗАО
"ГОСУДАРСТВЕННАЯ ВНЕВЕДОМСТВЕННАЯ ЭКСПЕРТИЗА ПРОЕКТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

"THE STATE NON DEPARTMENTAL EXPERT COMMISSION FOR CONSTRUCTION DESIGNS OF REPUBLIC OF ARMENIA " CJSC

0078 Ереван, Комитаса 54б | 0078 Երևան, Կոմիտաս 54բ | St. Komitas 54b, Yerevan

09.01.2025թ. № [illegible]

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
գլխավոր քարտուղար
պարոն Գ.Պետրոսյանին

«Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա.Կարապետյանին

Հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 08.01.2025թ. N05/11/7 գրությունը՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն դիտարկելով **«Երևանի Գ. Քոչարի փողոցի հ. 21ա շենքի հիմնանորոգման (վերակառուցման) և բակի բարեկարգման»** աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 792957,3 հազ.դրամ՝ այդ թվում ԱԱՀ-ն:

Երաշխավորումն ուժի մեջ կհամարվի համապատասխան ճարտարապետահատակագծային առաջադրանքի առկայության դեպքում:

Սույն փորձագիտական եզրակացությունը տրվում է ի լրումն 13.08.2024թ. N7/պփ 165 գրությամբ տրված Փորձաքննության եզրակացության:

Առդիր՝ Փորձաքննության եզրակացությունը 2 օրինակից, յուրաքանչյուրը 10 թերթ:

Հարգանքով՝
Գործադիր տնօրեն

Գ.Արշակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՄՈՒՏՔ N 8
«09» 01 2025թ.

**«ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ**

**Իրավ. հասցե՝ ք.Երևան, Վաղարշյան 24/1, բն. 43**

**Հեռախոս՝ 010278638, 099353549**

**Էլ. փոստ՝ karoshinnaxagic@yahoo.com**


№ 01-25

«07» հունվարի 2025թ.

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
գլխավոր քարտուղար պարոն՝ Գ. Պետրոսյանին

Ի լրումն Մեր 23.12.2024թ. N 51-24 գրությանը.

Հարգելի պարոն Պետրոսյան տեղեկացնում եմ Ձեզ, որ մեր կողմից թույլ տրված վրիպակի պատճառով ի լրումն Ձեզ եմ ուղղարկում 51-24 գրության ուղղված տարբերակը: Վորջնարդյունքում ԿԸՀ-ի նախահաշվային արժեքը, որը կազմել էր 886926.1 հազ. դրամ՝ այդ թվում ԱԱՀ-ն, ստացել ենք 792957.3 հազ. դրամ՝ այդ թվում ԱԱՀ-ն:

*Հարգանքներով՝*

*«Կարոշիննախագիծ» ՍՊԸ*

*Տնօրեն* *Ա. Կարապետյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՄՏԻՑ N 0
«08» 01 2025թ.

*Կատարող՝ Կ. Կարապետյան*
*010278630, 091502875*